ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կվանտա ՍՊԸ-ն ՍԲԿ-ԷԱՃԱՊՁԲ 27/06 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
53	spinal needle	spinal needle	spinal needle	Չինաստան	Ողնուղեղային (սպինալ) ասեղ Pencil Point (մատիտաձև / չփեղեքող ծայրով)՝ ինտրադյուսերով (չափսը՝ 25G, երկարությունը՝ 90 մմ, ինտրադյուսերը՝ 20G), Նախատեսված է սպինալ (սուբարախնոիդալ) անզգայացման, ինչպես նաև ողնուղեղային հեղուկի (լիկվորի) ախտորոշիչ ծակման (պունկցիայի) իրականացման համար: Ասեղն ունի «Pencil Point» (մատիտաձև/չփեղեքող) ատրավմատիկ ծայր՝ կողմնային անցքով (լատերալ ելքով), որը նվազագույնի է հասցնում

						կարծրենու (dura mater) պատռվածքը և զգալիորեն նվազեցնում է հետպունկցիոն հիպոտենզիվ ցավերի (PDPH) առաջացման ռիսկը: Չափսը՝ 25G (արտաքին տրամագիծը՝ 0. 50 մմ), երկարությունը՝ 90 մմ: Համալրված է համապատասխան ուղղորդող ասեղով՝ ինտրադյուսերով (ներդրիչով), չափսը՝ 20G (երկարությունը՝ 35-38 մմ), որն ապահովում է 25G ասեղի անխոչընդոտ և ճշգրիտ ուղղորդումը: Ասեղի կոնեկտորն ունի թափանցիկ տեսախցիկ (օբտուրատորի/մանդրենի հիմքում)՝ լիկվորի հետհոսքը (flashback) արագ և հստակ տեսողական վերահսկելու համար, և գունային կոդավորում՝ ըստ ISO ստանդարտի: Ապրանքը պետք է լինի անհատական ստերիլ փաթեթավորմամբ, միանվագ օգտագործման, ապիրոգեն, ոչ տոքսիկ, փաթեթի վրա արտադրման և պիտանիության ժամկետների, ինչպես նաև խմբաքանակի (LOT) նշումով:Մատակարարման պահին ապրանքի մնացորդային պիտանիության ժամկետը պետք է

					կազմի՝ մինչև 1 տարի ընդհանուր պիտանիության ժամկետ ունեցող ապրանքների համար՝ առնվազն 75%, 1–2 տարի ընդհանուր պիտանիության ժամկետ ունեցող ապրանքների համար՝ առնվազն 2/3, 2 տարուց ավելի ընդհանուր պիտանիության ժամկետ ունեցող ապրանքների համար՝ առնվազն 15 ամիս։ Որակի և համապատասխանության փաստաթղթեր՝ արտադրողի որակի կառավարման համակարգի ISO 13485 գործող հավաստագիր (կամ համարժեք փաստաթուղթ), ինչպես նաև տվյալ արտադրանքի համար կիրառելի համապատասխանության գնահատման փաստաթուղթ՝ CE նշանի և ԵՄ համապատասխանության հայտարարագրի (կիրառելի ԵՄ կանոնակարգի համաձայն), կամ դրանց համարժեք փաստաթղթի տեսքով։ Վերոնշյալ փաստաթղթերը մատակարարը պարտավոր է ներկայացնել ապրանքի մատակարարման պահին՝ տվյալ արտադրանքի նկատմամբ դրանց կիրառելիության դեպքում

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Кванта ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՍԲԿ-ԷԱՃԱՊՁԲ 27/06 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
53					